

իւր գօրուքիւնը չստիւրով պատրաստուելու աչդ գործը իրեն օգտակար ընելու համար » :

Թէպէտ և ինքն ալ չէր համոզուած որ ջրանցը կարենայ 1868ին բացուիլ, և սակայն չհամարիր որ երկայն ժամանակ ուշանայ, և կը յուսայ որ 1871ին անվրէպ բացուի: Եւ սակայն հակառակ կարծիքը նախադաս կը համարուէր ժողովրդեան մէջ, որ չէր կարող գործոյն վրայ ուղիղ դատաստան ընել, կրիւք և սխալ կարծեօք զգածեալ ըլլալով: Գիտնականներն իսկ տարակուսեցան թէ ինչ ըսեն, այնչափ 'ի սկզբան կարծիքները զիտնոց մէջ չհամաձայնեցան, ուստի զարմանք չէ եթէ ժամանակին որոշումը կարծածնէն ուշ ինկաւ:

Երկու տարի անցաւ, և խնդիրը շատ առաջ գնաց: Անցեալ յունուարի մէջ այցելութեան գնացի այն աշխատութեանց, ոչ անցողաբար ինչպէս 'ի պաշտօնէ սահմանեալ քննիչները ըրին, որք խաւրուած էին Եւրոպիոյ ամեն կողմէն, նաև Ամերիկայէն, Ասիայէն և Պարսկաստանէ, այլ ուշի ուշով ու շատ շաբաթներ նուիրելով: Առանձին տըւեալ տեղեկութիւններէ, նոր մեքենայից գործածութենէ և իւրաքանչիւր գործերէ կրցայ ստուգել եթէ 1865ին տրուած տեղեկութեանց ստուգութիւնը, և թէ ներկայ ժամանակիս եղած յառաջադիմութիւնը: Ուստի իմ տըւած տեղեկութիւններս առաջիններուն հակառակ չեն ելներ, այլ անոնց լրումն կու տան. կը լուծեն անլոյծ խնդիրները և տարակոյսները: Գիտնալով որ ճշմարտութիւնը միայն անյաղթելի է, ջանամ պիտի ըստ իմ կարեաց հաւատարիմ թարգման ըլլալ անոր: Ես որ գործոյն ջերմ պաշտպաններէն և զըրգուիչներէն մէկը համարուած եմ, որուն վրայ միշտ կը պարծիմ, պարտ անձին կը համարիմ ըսել այն բանը որոյ ստուգութեան վրայ ապահով ըլլամ: Ուստի որոշեցի 'ի բաց թողուլ տարակուսական գործեր և մանրամասն տեղեկութիւններ, և միայն յիշատակել ըս-

տոյգ դիտողութիւններ, և 'ի վերջէ յայտնել իմ կարծիքս:

Այս գործոյս վրայ ստոյգ գաղափար մը առնելու համար, հարկաւոր է նախ քննել, թէպէտ և համառօտիւ, թէ բընութիւնն ինչ զժուարութիւններ առջև դրած է երկրին զրից պատճառաւ. թէ ինչպէս այս խորհուրդը մէջտեղ ելած է, և ինչպէս սկսած. և թէ ինչ կերպարանք առած է մինչև այժմեան վիճակը հասնելու համար. և որոյ վրայ գլխաւորապէս կ'ուզեմ մանրամասն խօսիլ:

Կը շարունակուի:

Քաւնիդիքերսդան.

Հարկ չկայ որ խելացի մարդ մը Ամս դերտամ կամ աշխարհիս ուրիշ որ և իցէ տեղը երթայ, մարդկային գործոց յողողութեանը վրայ արդարացի խորհրդածութիւններ ընելու համար. ամեն օր առանց տնէն ելլալու կրնայ իրեն վիճակին վրայ գոհ ապրիլ սորվիլ և չցանկալ այն հարստութեանց և զեղխ վայելից՝ որոնք այնչափ սուղի կը նրստին և այնպէս քիչ ալ կը դիմանան: Բայց եկուր նայէ որ դիպուածին ուզելովը իրաւցընէ Ամսդերտամի մէջ եղաւ որ Գերմանացի երիտասարդ գործաւոր մը ճանչցաւ սոյն բարոյական ճշմարտութիւնը:

Այս վաճառականութեան մեծ և հարուստ շահաստանը հասնելուն պէս, որ լի է փառաւոր տուներով, նաև հանգիստը գեղեցիկ նաւերու բազմութենէ և դարափունքը գործունեայ և աշխոյժ մարդիկներով ծածկուած, ուրիշ տուներէ աւելի աղուորկեկ տուն մը իրեն ուշադրութիւնը գրաւեց, որուն նմանը բնաւ չէր տեսած բոլոր ճամբորդութեանը միջոց և զարմացաւ մնաց:

Յետ երկայն ատեն զննելու այս գե-

Այն ատեն երկու մեծակաթիլ ար-
ցունքներ ինկան Տըղլինկէնի բարե-
սիրտ գործաւորին աչուրներէն և սիր-
տը տրորեցաւ . . . Բայց քիչ ատենէ
մխիթարուելով, « Խեղճ Քաննիդֆէրս-
դան, կանչեց, ինչ մնաց հիմա ձեռք
բոլոր ունեցած հարստութիւններէդ,
բայց եթէ ինչ որ ես ալ աղքատու-
թեամբս հետս պիտի տանիմ, սե լաթ
մը, վարչամակ մը. և բոլոր գեղեցիկ
ծաղկըներէդ՝ թերևս խնկունի՝ մը ցըր-
տացեալ կուրծքիդ վրայ և կամ պըզ-
տիկ անթառամ՝ մը » : Այս և այսպիսի
բաներ մտածելով զնաց մեռելոյն ե-
տեէն ինչուան գերեզման, իբրև թէ
յուզարկաւորներէն ըլլար. տեսաւ մի-
լիոններու տէր մարդուն իր խաղաղու-
թեան քնարանն իջնալը, և շատ աւելի
խանդաղատեցաւ հոլանտերէն դամբա-
նականէն ուսկից բան մըն ալ չհասկը-
ցաւ քան թէ այնչափ գերմաններէն քա-
րոզներէ որոնց ամենեկին մտիկ չէր ը-
րած : Յետոյ ինքն ալ ուրիշներու պէս
իր տեղը դարձաւ՝ սիրտը քիչ մը թե-
թեցած, և պանդուկը մտնալով ուր գեր-
մաններէն կը խօսուէր՝ աղէկ ախորժա-
կով Լիմպուրկի պանիրի կտոր մը կե-
րաւ. և ամեն անգամ որ նախանձիլը
կու գար տեսնելով քան զինքը աւելի
հարուստ այնչափ հոգի, մխիթարուե-
լու համար կը յիշէր Պ. Քաննիդֆէրս-
դանը, իր հոյակապ տունը, փառաւոր
նաւը և անձուկ գերեզմանը :

Բայց մոռցայ հոլանտերէն պատաս-
խանին թարգմանութիւնը ձեզի տա-
լու, որ այս երիտասարդ գերմանացի
գործաւորին այնպիսի խորունկ և օգ-
տակար բարոյական խորհրդածութիւն-
ներ ազգեց՝ որչափ որ կրնար ազգել
իրեն Սենեկայի կամ կիկերոնի մէկ ի-
մաստասիրական գրուածքը :

Այն երեք անցաւորները որոնցմէ
խեղճ գործաւորը տեղեկութիւն ուզեր
էր պալատին, նաւուն և թաղմանը վը-
րայ, միայն իրենց մայրենի լեզուն հո-

1 Տճ. Պիպերինէ :

լանտերէնը գիտէին : Անոր համար ե-
րեքն ալ մի և նոյն կերպով Kan nit
verstan պատասխաններ էին, որ հայե-
րէն կը թարգմանուի Չեւ հասկընար :

Սակայն ինչ փոյթ. բառի մը նշա-
նակութեան սխալ հասկացումը ճամ-
բորդին մտքին մէջ բարոյական ճշմար-
տութիւն մը զարթուցեր էր. ականջը
խաբուեր էր, և ոչ թէ սիրտը :



Գործարանաւոր և իշխերը փտուքեւեւ
ազատ պահելու վրայ :

Գործարանաւոր մարմինը կ'ըսուին
բուսական և կենդանական նիւթերը,
որը բնութեան ուրիշ ամեն մարմիննե-
րէն աւելի ենթակայ են ապականու-
թեան և փտութեան : Այսպիսի մար-
մինները երկար ժամանակ անայլայլակ
պահելու համար, պէտք է կատարել
հետագայ պայմանները. այս ինքն Ա,
զնել այնպիսի բարեխառնութեան մէջ
որ 5 աստիճանէ պակաս ըլլայ, Բ, մեր-
կացունել 'ի ջրոյ և 'ի թթուածնէ : Ուս-
տի գործարանաւոր մարմին մը փտու-
թեանէ ազատ պահելու համար, պէտք
է կամ զնել զնա սառուցի աստիճանի
մէջ, կամ բոլորովին չորցունել զնա,
և կամ զնել այնպիսի տեղ ուր թթուա-
ծին չըլլայ : Կրնամք նաև գործածել
այնպիսի մարմիններ որը գործարանա-
ւոր նիւթոց հետ կարենան յօրինել
անփտելի բաղադրութիւններ :

Առաջին պայմանը այս ինքն մարմին-
ները զրոյ աստիճանի մէջ պահելը, զը-
ժուարին է կատարել. փորձեցին պա-
հել ձուկը սառի մէջ բայց չյաջողեցաւ :
Երկրորդ պայմանը, այսինքն ջրէ ազատ
պահելը աւելի դիւրին է կատարել, չոր-
ցունելով բուսական և կենդանական
նիւթերը արևու կամ ջերմանոցներու
մէջ : Երբեմն կը գործածուի աղ և շա-
քար, նիւթը նախ չորցունելով. այս
կերպով կրնամք պահել տառեխ և ուրիշ
ձկներ : Կերակրոյ աղն ոչ միայն իրեն